


ՀԱՍՏԱՏՎԱԾ Է. ԵՐԿՐԻ-Ի ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
«29» օգոստոսի 2014թ. նիստում
ՌԵԿՏՈՐ  Դ. ՄՈՒՐԱԴՅԱՆ



ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների (այսուհետև ուսանողական հարցումներ) կանոնակարգը սահմանում է ԵԹԿՊԻ ուսանողության կողմից ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման, հարցման անցկացման և արդյունքների օգտագործման կարգը:
- 1.2 Ուսանողական հարցումները անցկացվում են «Կրթության մասին» ՀՀ օրենքի և ԵԹԿՊԻ կանոնադրության պահանջների հիման վրա և համարվում է ԵԹԿՊԻ ուսանողության՝ ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսևորում:
- 1.3 Ուսանողական հարցումների կանոնակարգը հաստատում և դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարում է ԵԹԿՊԻ գիտական խորհուրդը:
- 1.4 Սույն կանոնակարգի մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում են նույն կարգով:

2. Ուսանողական հարցումների անցկացումը

- 2.1 Առկա ուսուցման համակարգում ուսանողական հարցումներն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո սեպտեմբեր-հոկտեմբեր, փետրվար-մարտ ամիսներին(կամ քննաշրջանը սկսվելուց առաջ դեկտեմբեր, մայիս ամիսներին), հեռակա ուսուցման համակարգում՝ նախորդ ուսումնական տարվա տվյալների հիման վրա՝ նոյեմբեր ամսին: Ավարտական կուրսում 2-րդ կիսամյակի վերաբերյալ հարցումներն իրականացվում է մինչև պետական քննությունների սկիզբը:
- 2.2 Ուսանողական հարցումներն իրականացվում է ինստիտուտի որակի ներքին ապահովման կենտրոնի կողմից՝ դեկանատների օժանդակությամբ:

2.3 Ուսանողական հարցումներն անցկացվում են սույն կանոնակարգին կից հարցաթերթերով:

2.4 Գնահատման արդյունքները ներկայացվում են յուրաքանչյուր դասախոսի (դասընթացի) համար հաշվարկված գնահատականների միջին թվաբանականով:

2.5 Ուսանողական հարցաթերթերը անանուն է:

2.6 Ուսանողական հարցումները անց են կացվում ՈՆԱ կենտրոնի կողմից սահմանված և դեկանատների կողմից նախապես ներկայացված ժամանակացույցի համաձայն՝ դասաժամերին, կուրսի/խմբի ուսանողների առնվազն երկու երրորդի մասնակցության պայմաններում: Հակառակ դեպքում դեկանատը պարտավոր է հաջորդող աշխատանքային 5 օրվա ընթացքում ապահովել ուսանողների ներկայությունը՝ չկայացած հարցումն ացկացնելու համար:

2.7 Հարցումից հետո հարցաթերթերը կնքվում են բուհի կնիքով:

3. Ուսանողական հարցման արդյունքների մշակումը և պահպանումը

3.1 Ուսանողական հարցման արդյունքները մշակվում են ՈՆԱԿ-ի և համակարգչային ցանցի սպասարկման բաժնի կողմից, դեկանատների աջակցությամբ:

3.2 Ուսանողական հարցման արդյունքները 5 տարի պահվում են ՈՆԱԿ-ում և դեկանատում:

4 Ուսանողական արդյունքների օգտագործումը

4.1 Ուսանողական հարցման արդյունքները ՈՆԱԿ-ը ներկայացնում է համապատասխան ֆակուլտետ:

4.2 Ուսանողական հարցման արդյունքները քննարկվում են համապատասխան ամբիոնում, այնուհետև՝ ֆակուլտետի խորհուրդի նիստում: Ուսանողների գրավոր կարծիքները քննարկվում են դեկանատի նիստում: Քննարկման արդյունքում մշակվում են համապատասխան առաջարկություններ և երաշխավորություններ՝ ուղղված դասախոսի դասավանդման որակի բարելավմանը:

4.3 Ֆակուլտետի դեկանը պարտավոր է կազմակերպել հարցման արդյունքների քննարկում դասախոսների և ուսանողների հետ մեկ ամսվա ընթացքում:

4.4 Դասախոսն իրավունք ունի դեկանատի ներկայությամբ ծանոթանալու հարցման՝ իրեն վերաբերող կարծիքների:

4.5 Ուսանողական հարցման արդյունքներն օգտագործվում են՝

4.5.1 Դասախոսի աշխատանքի արդյունավետության գնահատման

4.5.2. Դասախոս-ուսանող փոխհարաբերությունների բացահայտման

4.5.3. Դասախոսի մասնագիտական գնահատականի որոշման

4.5.4. Դասախոսի խրախուսման, հետագա մասնագիտական ծրագրերի բարելավման

4.5.5. Դասախոսի դասավանդման թերությունների դուրսբերման և բացահայտման

4.5.6. Թերությունները վերացման, նոր առաջարկների ընդունման

4.5.6. Վերոնշյալ արդյունքները, արձանագրված բացթողումները շտկվում են երկու տարվա ընթացքում